Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
մարտի 5-ի N 254 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը լիցենզավորող մարմնի (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) կողմից առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա ստանալու համար հայտերի, առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հայտարարությունների ու առևտրի իրականացման վայրի լիցենզավորված կազմակերպիչների հաշվետվությունների պատճենները հարկային մարմին ներկայացնելու, ինչպես նաև հարկային մարմնի կողմից լիցենզավորող մարմին տեղեկանքներ ու տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերը։

2. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը լիցենզավորող մարմնում մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ լիցենզավորող մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի «Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը լիցենզավորող մարմնի ու հարկային մարմնի միջև տեղեկատվության փոխանակման կարգը և տեղեկու-

թյունները ներկայացնելու ձևերը հաստատելու մասին» N 254 -Ն որոշման N 2 հավելվածի N 1 ձևով հարկային մարմին է ներկայացնում տեղեկություններ՝ դրանց կցելով՝

1) լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտերի պատճենները.

2) հայտերին կից՝ լիցենզավորող մարմին ներկայացված առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հայտարարությունների պատճենները։

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված փաստաթղթերը հարկային մարմնում մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը լիցենզավորող մարմին է ներկայացնում՝

1) տեղեկանք հայտատուի հայտարարությունում նշված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հարկ վճարողի հաշվառման համարների և հարկային մարմնում հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման քարտի համարների համապատասխանության կամ հայտարարությունում տեղ գտած անհամապատասխանությունների մասին.

2) հայտատուի մասին տեղեկություններ՝ սահմանված կարգով առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու անհրաժեշտության կամ բացակայության մասին։

4. Հարկային մարմինը լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտարարությունում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության մասին կատարում է նշում սույն կարգի 3-րդ կետով նախատեսված տեղեկանքում, որի արդյունքում լիցենզավորող մարմինը հայտը կարող է բավարարել վերապահումով, որ լիցենզիան հայտատուին կտրվի դրանց վերացման դեպքում։

5. Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ՝ լիցենզավորող մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի «Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը լիցենզավորող մարմնի ու հարկային մարմնի միջև տեղեկատվության փոխանակման կարգը և տեղեկությունները ներկայացնելու ձևերը հաստատելու մասին» N 254 -Ն որոշման N 2 հավելվածի N 2 ձևով հարկային մարմին է ներկայացնում տեղեկություններ՝ դրանց կցելով տվյալ եռամսյակի ընթացքում լիցենզավորող մարմին առևտրի իրականացման վայրի լիցենզավորված կազմակերպիչների կողմից ներկայացված՝ առևտրի իրականացման վայրի տրամադրած վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հաշվետվությունների պատճենները։

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը հարկային մարմնում մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը լիցենզավորող մարմին է ներկայացնում տեղեկանք հաշվետվությունում նշված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հարկ վճարողի հաշվառման համարների և հարկային մարմնում հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման քարտի համարների համապատասխանության կամ հայտարարությունում տեղ գտած անհամապատասխանությունների մասին։

7. Հարկային մարմինն առևտրի իրականացման վայրի լիցենզավորված կազմակերպչի հաշվետվությունում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) առկայության մասին կատարում է նշում սույն կարգի 6-րդ կետով նախատեսված տեղեկանքում։

8. Անկախ սույն կարգով նախատեսված ժամկետներից՝ հարկային մարմինը լիցենզավորող մարմին է ներկայացնում նաև ընթացիկ տեղեկատվություն օրենքով առևտրի

իրականացման վայրի կազմակերպչին ներկայացվող՝ հարկային մարմնի հսկողության շրջանակներում պահանջների խախտման դեպքերի մասին։

9. Հարկային մարմնի ներկայացրած տեղեկությունների հիման վրա՝ լիցենզավորող մարմնի կողմից առևտրի իրականացման վայրի կազմակերպչի լիցենզիայի գործողությունը կասեցվում և (կամ) դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

10. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիաներ տալու, գործող լիցենզիաների գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործունեության վայրի փոփոխության, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեության իրականացման, ինչպես նաև լիցենզիայի գործողության կասեցման, լիցենզիայի գործողության դադարեցման մասին լիցենզավորող մարմինը հարկային մարմին է ներկայացնում տեղեկություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

11. Սույն կարգով նախատեսված տեղեկությունները կարող են փոխանակվել նաև էլեկտրոնային եղանակով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
մարտի 5 -ի N 254 - Ն որոշման

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Մ Ի Ն Ն Ե Ր

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեղեկություններին կցվող էջերի թիվը (լրացվում է թվերով և տառերով)								
Տեղեկությունները ներկայացնելու ամսաթիվը								

NN ը/կ	Տեղեկություններ առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա ստանալու համար՝ լիցենզավորող մարմին հայտ ներկայացրած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին					Տեղեկություններ ներկայացված հայտարարության մասին	
	հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական գրանցման ամսաթիվը	պետական գրանցման համարը	իրավաբանական անձի գտնվելու (անհատ ձեռնարկատիրոջ բնակության) վայրը	գործունեության իրականացման վայրի հասցեն	ընդամենը՝ վաճառատեղերի թիվը	ՀԴՄ տեղադրած վաճառատեղերի թիվը
1	2	3	4	5	6	7	8

09_0254

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Մ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեղեկություններին կցվող էջերի թիվը (լրացվում է թվերով և տառերով)								
Տեղեկությունները ներկայացնելու ամսաթիվը								

NN ը/կ	Տեղեկություններ առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա ունեցող և հաշվետվություն ներկայացրած իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերի մասին					Տեղեկություններ վաճառատեղերի մասին՝ ըստ հաշվետվությունների		
	հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական գրանցման ամսաթիվը	պետական գրանցման համարը	իրավաբանական անձի գտնվելու (անհատ ձեռնարկատիրոջ բնակության) վայրը	գործունեության իրականացման վայրի հասցեն	ընդամենը՝ վաճառատեղերի թիվը	վաճառատեղերի ընդհանուր մակերեսը (քառ. մ)	ՀԴՄ տեղադրած վաճառատեղերի թիվը
1	2	3	4	5	6	7	8	9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ